

ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐԾԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԼԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱՏԵՔՍՈՒՄ

Հակոբ Չաքրյան

Հոդվածում քննարկվում է Մերձավոր և Միջին Արևելքի բարդ տարածաշրջանում հայ-թուրքական ներկայիս հարաբերությունների նախադրյալները և զարգացման հեռանկարները:

Քննարկումները անց են կացվում դարաբաղյան հակամարտության մեջ թուրքիայի դերակատարման համատեքստում: Նշվում է թուրքական գործոնի աստիճանական թուլացումը, մասնավորապես Աֆղանստանում և Իրաքում ԱՄՆ ակտիվացմանը զուգընթաց:

1991թ. սեպտեմբերի 21-ին, երբ Հայաստանի Հանրապետությունն անկախություն հռչակեց, և այն Իրանի Իսլամական Հանրապետության գլխավորությամբ ճանաչեցին Մերձավոր և Միջին Արևելքի գրեթե բոլոր երկրները, այդուհանդերձ, մերձավորարելեյան ընտանիքի լիիրավ անդամը դառնալու համար անհրաժեշտ էր նաեւ վերջիններիս հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը:

Քանի որ ԽՍՀՄ-ի փլուզումով Հայաստանը զրկվել էր խորհրդային պաշտպանական վահանից, ուստի դիվանագիտական հարաբերությունները նաև ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտություն էին: Այլ կերպ ասած՝ անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը կանգնել էր իր անվտանգությունը սեփական ուժերով ապահովելու կենսական խնդրի առջև: Այդ առումով «բարիդրացիական հարաբերությունների հաստատումն անխտիր բոլոր հարևանների, այդ թվում՝ Թուրքիայի հետ» սկզբունքորեն ճիշտ որոշում էր: Թվում էր, թե նորանկախ Հայաստանի ղեկավարությունը դրանով փորձում էր քաղաքական լուծում տալ ազգային անվտանգության խնդրին:

Մինչդեռ նույն Թուրքիան Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու և Ադրբեջանը որպես ցատկահարթակ օգտագործելու միջոցով Կենտրոնական Ասիա ներթափանցելու խնդիր ուներ՝ թուրքալեզու հանրապետությունների տնտեսական, քաղաքական և մշակութային միություն ձևավորելու հեռահար նպատակով: Ուստի, Հայաստանը սուսկ իր գոյությամբ նրա երկարաժամկետ շահերի խոչընդոտ համարվեց: Դրա վառ արտահայտությունը վարչապետ Սուլեյման Դեմիրելի կողմից Հայաստանին տրված բնութագրումն էր՝ «անիծյալ սեպ» [1]:

Հատկանշական է, որ պանթուրքիզմի հիմնադիրներից Յուսուֆ Աքչուրան էլ Հայաստանը նույնացնում էր «թմբի» հետ: 1920թ. հուն-

վարի 29-ին Աքչուրան, Ստամբուլի համալսարանում ներկաներին դիմելիս, պատճառաբանելով, թե դաշնակիցները Հայաստանն ուզում են իբրև թումբ կանգնեցնել երկու եղբայր հատվածների՝ Անատոլիայի և Կովկասի թրքության միջև, հետևյալ կոչն արեց. «Պետք է ոչնչացնել Հայաստանը» [2]:

Երբ խոսքը «թրքության եղբայր հատվածներին» է վերաբերում, սպա «թումբը» չի կարող տարբերվել «անիծյալ սեպից»: Հարցը, սակայն, սոսկ ադրբեջանցիներից թուրքերի անջրպետումը չէր, այլև՝ Անդրկովկասը Ռուսաստանից տարանջատելու ամերիկյան ծրագրերն էին ու դրանց ծառայելու Թուրքիայի պատրաստակամությունը: Քանի որ Հայաստանն իր գոյությամբ հակասում է թուրքալեզու ժողովուրդների միավորման թուրքական տրամաբանությանը, ուստի նրա չեզոքացումը հրամայական էր դառնում Թուրքիայի համար, և որպես առաջնային խնդիր, հայտնվում պաշտոնական Անկարայի օրակարգում:

Այս ամենը, սակայն, անտեսվեց Հայաստանի իշխանությունների կողմից: Նրանք տեղի տալով ԱՄՆ-ի տրամադրություններին, ակամա նպաստեցին տարածաշրջանում Թուրքիայի հետ պաշտոնական Երևանի միջպետական կապերի նշանակության գերազնահատմանը: Ավելին՝ կառավարող շրջանակների որոշ հայ գործիչներ սկսեցին հանդես գալ «Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ վերանայելու և գլխավորապես դեպի Թուրքիա կողմնորոշելու» պահանջով [3]:

Թեև այս միտումը զարգացում չստացավ, սակայն նախադրյալներ ստեղծեց, որպեսզի Թուրքիան էլ անտեսի Հայաստան-Ռուսաստան դաշինքի հավանականությունը և իր հերթին թերազնահատի հայկական գործոնի նշանակությունն Անդրկովկասում: Ահա թե ինչու 1991թ. դեկտեմբերի 16-ին թուրքական կառավարությունը, ճանաչելով Հայաստանի անկախությունը, այդուհանդերձ հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել վերջինիս հետ:

Մերժման պատճառաբանությունը զուգակցվում էր Հայաստանին հետևյալ նախապայմանների առաջադրումով. չհիշատակել 1915թ. ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի գերիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Միաժամանակ պահանջվում էր երաշխիքներով ամրակայված հավաստիացում, որ Հայաստանը գերծ կմնա Թուրքիայի ազգային արժանապատվությունը վիրավորող գործողություններից և ամեն կերպ կչեզոքացնի հայկական լրբբի «հակաթուրքական» գործունեությունը Սփյուռքում [4, էջ14-15]:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար նա-

խապայմանների առաջադրումն անհարիր է միջազգային պրակտիկային: Սակայն թուրքիան, ինչպես այդ մասին վկայում է քաղաքական մեկնաբան Սեդաթ Էրզինը «Հյուրիեթի» 1991թ. նոյեմբերի 15-ի համարում, «Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերությունները հաստատելու կարիքը» չունեն: Ընդհակառակը՝ այդպիսի խնդիր հենց հայերն ունենին, ընդ որում, դա Հայաստանի համար իբր կենսական անհրաժեշտություն էր: Այսպիսով, թուրքիան նման նախապայմաններով փորձում էր Հայաստանին դարձնել կամակատար և նրա միջոցով իր կամքը թելադրել Ղարաբաղի հայությանն ու հայկական Սփյուռքին:

Հայաստանը մերժեց հայկական պետության միջազգային հեղինակությունը կասկածի տակ դնող թուրքական նախապայմանները, ինչին հետևեց թուրքիայի բացասական արձագանքը: Այս իրավիճակում միանգամայն տրամաբանական է, որ Անկարան անպատասխան թողեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի «Հայ-թուրքական հարաբերությունները միջպետական մակարդակի բարձրացնելու» ակնկալիքով թուրքիայի ղեկավարներին հասցեագրած ուղերձը [5]:

Հայ-թուրքական հարաբերություններն ավելի լարված բնույթ ստացան 1992թ. փետրվարին, երբ Ղարաբաղյան ուժերը չեզոքացրին Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կարևոր հենակետերից մեկը՝ Խոջալուն:

Սակայն դա չխանգարեց, որ 1992թ. հունիսի 25-ին Հայաստանն իբրև Սևծովյան տնտեսական համագործակցության հիմնադիր անդամ, թուրքիայի կողմից հրավիրվի Ստամբուլ: Իրականում, համագործակցության նախաձեռնողն ԱՄՆ-ն էր: Քանի որ տարածաշրջանում թուրքիան ԱՄՆ-ի շահերն էր արտահայտում, ուստի Հայաստանը, անդամակցելով Համագործակցությանը, ոչ միայն նրա քաղաքական ուղեծրում էր հայտնվում, այլև թուրքական միջանցքով Արևմուտքի ազդեցության ոլորտ էր ներքաշվում: Այլ կերպ՝ կապն Արևմուտքի հետ միջնորդավորվում էր թուրքիայով [6]:

Խոջալուից հետո ազատագրվեց Շուշին, ապա բացվեց և Լաչինի միջանցքը: Թուրքական կառավարությունն այս իրադարձություններին արձագանքեց՝ երկրում հակահայկական հիստերիա հրահրելով: 1992թ. մարտին նախագահ Թուրգուբ Օզալն իր կառավարությունից պահանջեց հայերի «ոճրագործությունների» դեմ վճռական գործողությունների դիմել: Այնուհետև նա սպառնաց «թուրքական ռազմական ուժերով կանգնեցնել հայերի առաջխաղացումը» [7]: 1993-ին, երբ Ղարաբաղյան ուժերը մուտք գործեցին Քելբաջար, Օզալը, ակնարկելով 1915թ. ցեղասպանությունը, հայտարարեց, թե հայերը «դասեր չեն քաղել Անատոլիայի փորձությունից և այնտեղ կրած

պատժից» [3, էջ 16]: Նա նույնիսկ «Հայաստանի վրա մեկ-երկու ռունք արձակելու» թույլտվության ակնկալիքով դիմեց ԱՄՆ նախագահ Բիլ Բլինթոնին [8]:

Օգալի ռազմաշունչ հայտարարություններին զուգընթաց, Անկարայի պաշտոնական շրջանակները քննարկում էին Հայաստանի նկատմամբ «կիպրոսյան տարբերակի» կիրառումը, որը ենթադրում էր հանկարծակի հարձակում և երկրի արագ գրավում: Այդ ընթացքում համալրվեցին Հայաստանի սահմանին տեղակայված և մարտական պատրաստականության բերված թուրքական զորքերը: Հայաստանը կանգնեց Թուրքիայի ռազմական ներխուժման լուրջ վտանգի դեմ հանդիման [9]:

Միաժամանակ, երկրում աշխուժացան թուրք ազգայնամուլները: «Ազերի եղբայրներին օգնության ձեռք մեկնելու» կարգախոսով, «Գորշ գայլերը» զենքի կոչեցին «զգոն թուրքերին»: «Գերչեք» շաբաթաթերթի տվյալներով՝ մինչև 1992թ. հունիսը Նախիջևանի և Ադրբեջանի տարածքում տեղակայված էր շուրջ 3 հազար թուրք կամավոր [10]: Ինչ վերաբերում է թուրքական կառավարությանը, ապա նա, դեղորայքի և պարենամթերքի քողի տակ, արդեն հասցրել էր ադրբեջանցիներին զենք և զինամթերք մատակարարել, այդ թվում՝ «Ստինգեր» տեսակի հրթիռներ, հրթիռային կայանքներ, ականներ և ականանետներ [11]: 1993-ին Թուրքիան պաշտոնապես Ադրբեջանին \$30 մլն. վարկ հատկացրեց՝ զենք գնելու համար [12]: Փաստորեն, նա դարձավ ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցը՝ իր անուղղակի մասնակցությունը բերելով Լեռնային Ղարաբաղում ծավալվող ռազմական գործողություններին:

Հաշվի առնելով թուրքական ներխուժման հնարավոր հետևանքները ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի համար՝ Ռուսաստանը ճնշում գործադրեց Թուրքիայի վրա: ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը լուրջ նախազգուշացում հղեց Թուրքիային, որից հետո վերջինս ուղղակի չհամարձակվեց Հայաստան ներխուժել:

Ղարաբաղյան ուժերը տպավորիչ հաղթանակների հասան ադրբեջանցիների նկատմամբ: Այսպիսով ի չիք դարձան հակամարտության գոտում Թուրքիայի աջակցությամբ ռազմական հավասարակշռությունը փոխելու Ադրբեջանի հույսերը: Ավելին՝ 1992թ.-ին Լեռնային Ղարաբաղը հռչակվեց անկախ հանրապետություն: 1993-ին ԼՂՀ պաշտպանության բանակն Ադրբեջանին պատճառելով տարածքային կորուստներ՝ իր վերահսկողության տակ առավ մինչև Հորադիզ ընկած տարածքը: Զանգեզուրի գոտին ամրապնդվեց: Դրանով իսկ, փաստորեն, արգելակվեց Գորբլի ծրագրի իրագործումը [4, էջ 31-32]:

Այս ամենն Ադրբեջանին ստիպեց Ռուսաստանի միջնորդությամբ

ստորագրել 1994թ. մայիսի 12-ի հրադարարի պայմանագիրը: Հատկանշական է, որ եթե ԼՂՀ պաշտպանության բանակի հաղթական գործողությունները հանգեցրին Ադրբեջանում Թուրքիայի դիրքերի թուլացմանը, ապա հրադարարի պայմանագիրը նպաստեց, որպեսզի ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման նախաձեռնությունն անցնի Ռուսաստանին: Փաստորեն, կասկածի տակ դրվեցին թուրքական գործոնի՝ Անդրկովկասում Ռուսաստանի ազդեցությունը հակակշռելու և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում որոշիչ դեր խաղալու հնարավորությունները [4, էջ 33]:

Նախաձեռնության կորուստը Թուրքիային պարտադրեց Հայաստանի հետ մերձեցման միտումներ ի հայտ բերել: Թուրքիայի հետ հայ դիվանագետների երկխոսության ՀՀ նախագահի պատրաստակամությունը նպաստեց դրանց զարգացմանը: Ստեղծված իրավիճակում ՀՀ-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ, Անկարան Հայաստանին նախկինում առաջադրվող նախապայմաններին ավելացրեց ևս երկուսը՝ հայկական գործերի անհապաղ դուրս բերումը Ադրբեջանի գրավյալ տարածքներից՝ Շուշին ներառյալ և ադրբեջանցիներին Մեդրիի տրամադրումը՝ Լաչինի միջանցքի փոխարեն:

Թուրքիայի նմանօրինակ մոտեցումները չնպաստեցին հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Ավելին՝ եթե Անկարան մինչ այդ ուղղակիորեն չէր փորձում միջամտել Հայաստանի ներքին գործերին, ապա այժմ սկսեց նման փորձեր կատարել [13]: Դա արտահայտվեց 1994թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ-ի գործունեության կասեցման, ինչպես նաև 1996-ի խորհրդարանական, և իհարկե 1998-ի փետրվարին ՀՀ նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարականին հաջորդած նախագահական ընտրությունների հանդեպ թուրքական կողմի ցուցաբերած բացահայտ բացասական վերաբերմունքով:

Ղարաբաղյան ճակատում Թուրքիայի քաղաքական ծախսողունն ակնհայտ էր: Ինչ վերաբերում է հայաստանյան ճակատին, ապա նա իր ազդեցիվ կեցվածքով նպաստեց ղարաբաղյան շարժման սկզբնական փուլում (1988-1991թթ.) Խորհրդային Միության ղեկավարների կողմից Ադրբեջանին ցուցադրվող քաղաքական և ռազմական աջակցության պայմաններում հայ հասարակության մեջ առաջացած հակառուսական տրամադրությունների վերացմանը: Թուրքական սպառնալիքը հայ ժողովրդի ենթագիտակցության մեջ վերստին ամրապնդեց առանց Ռուսաստանի հետ սերտ դաշինքի Թուրքիայի հարևանությամբ գոյատևելու անհնարինության գաղափարը: Վերջինիս նկատմամբ անվստահությունը Հայաստանում համատարած բնույթ ստացավ:

Թուրքիայի ներխուժման կասեցումը դեռևս թուրքական վտանգի

չեզոքացում չէր: Վերջինս, միանալով Ադրբեջանին, շրջափակման էր ենթարկել Հայաստանը: Ուստի, ՀՀ իշխանությունները հարկադրված էին բոլոր հարևանների հետ «բարիդրացիական հարաբերություններ» պահպանելուց զատ, ազգային անվտանգության ապահովման այլ լուծումներ գտնել: Ստեղծված ծանր վիճակում նրանք իրենց հայացքն ուղղեցին դեպի Ռուսաստան: Հայ-ռուսական դարավոր բարեկամության ավանդույթից բացի, դա թելադրված էր նաև երկու երկրների ռազմավարական շահերի ընդհանրության գիտակցությամբ:

1995թ. մարտի 16-ին Հայաստանը Ռուսաստանի հետ ստորագրեց համատեղ պաշտպանության վերաբերյալ պայմանագիր և իր տարածքում նրան տրամադրեց ռազմական բազա: Դրան հետևեց 1997թ. օգոստոսի 27-ի երկու երկրների «Բարեկամության, համագործակցության և փոխօգնության» պայմանագրի ստորագրումը: Ինչպես և նախատեսվում էր այդ պայմանագրով, այդուհետև երկու կողմերը սկսեցին սերտորեն համագործակցել ռազմական և ռազմավարական բնագավառներում:

Ռուսաստանի հետ զինակցության շնորհիվ՝ Հայաստանի ազգային անվտանգությունը դրվեց հուսալի հիմքերի վրա: Ռուսաստանն իր հերթին, հանձինս Հայաստանի, Անդրկովկասում ռազմաքաղաքական հենարան ձեռք բերեց: Այլ կերպ՝ Հայաստանը դարձավ Անդրկովկասում ՌԴ ներկայության ազդեցիկ գործոն [14]:

Ինչ վերաբերում է հայ-ռուսական համագործակցությանը, ապա դա երևանին ոչ միայն թուրքական ճնշումներին դիմագրավելու հնարավորություն էր տալիս, այլև Հայաստանին միաժամանակ դարձնում էր գործոն հենց Թուրքիայի համար: Տարբերությունն այն է, որ եթե Ռուսաստանի պարագայում հայկական գործոնն ուներ կառուցողական գործառույթ, ապա Թուրքիայի համար՝ կանխարգելիչ, զսպող նշանակություն: Սա է պատճառը, որ ռազմական և ռազմավարական բնագավառներում համագործակցելով ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Վրաստանի հետ, Թուրքիան չի կարողանում Անդրկովկասում ազդեցիկ դիրքեր նվաճել, առավել ևս, այդ տարածքը վերածել իր ազդեցության ոլորտի:

Վստահաբար կարելի է ասել, որ Թուրքիան ձախողվեց նաև հայաստանյան ճակատում: Չնայած նրա ընդգծված հակահայկական դիրքորոշմանը, ներխուժման սպառնալիքներին և մշտական ճնշումներին, Հայաստանը կարողացավ պահպանել իր ազգային անվտանգությունը և սատարել Ղարաբաղի հայությանը՝ Ադրբեջանի դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարում: Կազմավորված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը արդյունքում ձեռք բերեց փաստացի անկախ կարգավիճակ:

Ինչ վերաբերում է շրջափակմանը, ապա դա ամենևին չխանգարեց Հայաստանին տնտեսական որոշակի աճ ապահովել: Դեռ ավելին՝ աճի ցուցանիշներով ՀՀ-ն գերազանցեց Թուրքիայի հետ տնտեսական բնագավառում սերտորեն համագործակցող Ադրբեջանին և Վրաստանին:

Հայաստանյան ճակատում Թուրքիայի ծախողումն ավելի քան ակնհայտ դարձավ, երբ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, որպես ռազմավարական հիմնախնդիր, հայտնվեց Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում, և ամրագրվեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ՄԱԿ-ի ամբիոնից կատարած հստակ ձևակերպումներով: Ֆրանսիայի գլխավորությամբ եվրոպական երկրների դրական արձագանքը նպաստեց Ցեղասպանության ճանաչման գործընթացի ծավալմանը:

Այս պայմաններում հայ-թուրքական հարաբերությունների նախաձեռնությունն ԱՄՆ-ից անցավ Եվրամիությանը: Հատկանշական է, որ եթե ԱՄՆ-ն իր նախաձեռնության հիմքում դնում էր այդ հարաբերությունների ծառայեցումը Անդրկովկասից Ռուսաստանի արտաքսման նպատակին պայմանավորելով դրանց կարգավորումը Հայաստանին միակողմանի զիջումներով, ապա ԵՄ-ն իր առջև խնդիր դրեց հայ-թուրքական երկխոսության սկզբնավորումը: Այսպիսով, Հայոց ցեղասպանության հարցը դարձավ երկխոսության միջոց:

Նկատի ունենալով հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ ԵՄ-ի չեզոք դիրքորոշումը, ինչպես նաև չեզոքությունից բխող նախընտրելիությունը Ռուսաստանի համար, թվում էր, թե երկխոսության հարցում Թուրքիան կընդառաջի եվրոպական երկրների նախաձեռնությանը: Թերևս դրանով էլ կստեղծվեին ե՛լ պատմությունը վերախմաստավորելու, ե՛լ Հայոց ցեղասպանության ծանր բեռը թոթափելու անհրաժեշտ նախադրյալները:

Սակայն Եվրոպայում ծավալվող Ցեղասպանության ճանաչման գործընթացին Թուրքիայի կոշտ և ծայրահեղական հակազդեցությունը գերազանցեց բոլոր ենթադրությունները:

Մասնավորապես ակնհայտ դարձավ, որ Թուրքիայի համար կարևորը ոչ այնքան հայ-թուրքական երկխոսությունն է որպես այդպիսին, որքան դրա ամերիկյան նախաձեռնությամբ ծավալումը, քանզի այս դեպքում Անկարան երկխոսության պատրաստակամություն հայտնելով՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը կանխարգելիչ, նախահարձակ միջոցներով կասեցնելու հնարավորություն է ստանում: Սակայն Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայության և նրա երկարատև շրջափակման պայմաններում Թուրքիան արդեն սպառել էր ազդեցու-

թյան ամեն մի միջոց: Այդ իսկ պատճառով՝ սպառնալիքը դարձավ Հայաստանի վրա ազդելու թուրքիայի միակ միջոցը, ընդ որում՝ խիստ կասկածելի արդյունավետությամբ:

Մինչդեռ թուրք քաղաքական գործիչների խոստովանությամբ՝ Հայոց ցեղասպանության բանաձևերը սպառնում էին թուրքական պետության միջազգային հեղինակությանը: Դա համազոր էր թուրքիայի նկատմամբ Հայաստանի դիրքերի ամրապնդմանը: Քանի որ Ցեղասպանության հարցում Ադրբեջանը համառորեն կառչում է թուրքական դիրքորոշումից, ուստի, վերոհիշյալ գործիչների վկայությամբ, նրա հեղինակությունը ևս սպառնալիքի տակ դրվեց: Հետևաբար, Հայաստանի դիրքերն ամրապնդվեցին նաև Ադրբեջանի նկատմամբ, ինչը հանգեցրեց ղարաբաղյան հիմնահարցում հայերի դիրքերի ամրապնդմանը [15]: Ուստի, միանգամայն տրամաբանական էր, որ հայ-թուրքական երկխոսության եվրոպական նախաձեռնությունները ձախողելու համար թուրքիան կասկածի տակ էր դնելու դրա նպատակահարմարությունը:

Հայաստանյան ճակատում թուրքիայի ձախողումը պայմանավորեց երկու երկրների հարաբերությունների կարգավորման ԱՄՆ-ի նախաձեռնությունների անհաջողությունը, ինչն իր հերթին հայ-թուրքական երկխոսության եվրոպական նախաձեռնությունների խաթարման պատճառը դարձավ: Այդ ընթացքում Հայաստանի հետ սերտ հարաբերություններ զարգացրեցին տարածաշրջանի երկրները՝ Իրանը, Սիրիան, Լիբանանը, ինչպես նաև Չինաստանը: Հունաստանի, Կիպրոսի և Ֆրանսիայի զլխավորությամբ ստեղծվեցին եվրոպական երկրների հետ Հայաստանի հարաբերությունների հետագա զարգացման բոլոր նախադրյալները:

Հայաստանի միջազգային դիրքերն ամրացան, նա դարձավ ազդեցիկ գործոն: Ներկայումս դժվար է առանց Հայաստանի մասնակցության պատկերացնել միջպետական որևէ համագործակցության ձևավորումն ու միջազգային ծրագրերի իրականացումն Անդրկովկասում: Հայաստանն Իրանի համար ևս լուրջ նշանակություն ձեռք բերեց՝ նպաստելով Անդրկովկասում նրա ազդեցության պահպանմանը:

Այսպիսով, թուրքիայի որդեգրած հայկական քաղաքականությունը, որն ի բնե հակահայկական է, չի նպաստում նաև Մերձավոր և Միջին Արևելքում նրա դիրքերի ամրապնդմանը: Մինչդեռ թուրքիան տարածաշրջանային ազդեցիկ քաղաքական ուժի հավակնություններ ունի, և այստեղ նրա դերը բնականաբար անհամեմատ մեծ է, քան Հայաստանինը, իսկ շահերը՝ ավելի քան բազմակողմանի:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը հիմնականում բխում է թուրքիայի

շահերից: Ուրեմն, առաջին հերթին դա թուրքիային է անհրաժեշտ և ոչ թե Հայաստանին: Թուրքիան դրանով իր արևելյան սահմանում ձեռք կբերի ոչ անբարյացակամ հարևան, միաժամանակ՝ նոր շուկա իր ապրանքների համար, և կբարելավվի երկրի արևելյան շրջանների ադիտալի սոցիալ-տնտեսական վիճակը: Այդ շրջաններում վերջ կտրվի համատարած արտագաղթին, կկանխվի ոչ միայն գյուղական, այլև քաղաքային բնակավայրերի հետագա ամայացումը: Զգալի կնվազի նրա առճակատման հավանականությունը Հայաստանի ռազմաքաղաքական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ: Հայ-ռուսական զինակցությունը թուրքիային այլևս չի անհանգստացնի, իսկ Հայաստանը, որպես ազգային անվտանգության ապահովման միջոց, կձեռք բազատվի թուրքական սահմանի պաշտպանվածության մակարդակը մշտապես բարձրացնելու պարտադրությունից: Այսպիսով, կվերանա Հայաստանի տարածքում տեղակայված ռուսական բազան արդիական ռազմական նոր տեխնիկայով հագեցնելու անհրաժեշտությունը:

Բացի այդ, թուրքիան հայկական գործոնին բախվելու փոխարեն կհամագործակցի Հայաստանի հետ: Արդյունքում, երկու երկրների հարաբերությունները դուրս կբերվեն՝ Անդրկովկասում ազդեցության գոտիների համար ծավալվող ռուս-ամերիկյան մրցապայքարի ոլորտից: Հայաստանն այլևս կդադարի ԵՄ-ում Թուրքիայի անդամակցության խոչընդոտներից դառնալ, և թուրքական իշխանությունները կձեռքբազատվեն եվրոպական երկրների համապատասխան ճնշումներից: Եվ վերջապես, Թուրքիայի համար ոչ վաղ անցյալում Ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի անվստահությունը մեղմելու նախադրյալներ կստեղծվեն [16]:

Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը, ինքնաբերաբար, Հայաստանի համար կնվազեցնի թուրքական վտանգը, և այս առումով կփոքրանա նաև ռուս-հայկական դաշինքի դերը: Նման պայմաններում, Հայաստանն իր արտաքին քաղաքականության մեջ անկաշկանդ գործելու լայն հնարավորություններ ձեռք կբերի: Դրանով իսկ, թերևս, կթուլանա անդրկովկասյան հանրապետությունների բևեռացումը: Տարածաշրջանում կստեղծվեն երկարաժամկետ խաղաղության և կայունության անհրաժեշտ նախադրյալներ:

Այս ամենը թուրքիայից պահանջում է առաջնորդվել տարածաշրջանի շահերով, դրսևորել բարի կամք և վերանայել Հայաստանի նկատմամբ իր որդեգրած թշնամական քաղաքականությունը: Մինչդեռ, օգտվելով միջազգային իրադրության առանձնահատկություններից, Անկարան հետզհետե էլ ավելի կոշտ դիրքորոշում է որդեգրում:

Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համառ մերժումը ոչ այլ ինչ է, քան հայ ժողովրդի անկախ

պետականության իրավունքի մերժում, իսկ նրա երկարատև շրջափակումը՝ նորաստեղծ հայկական պետությունը պետականորեն մշակված ծրագրով քայքայելու միտվածություն: Հարկ է նշել, որ Թուրքիան ոչ միայն այդ հարաբերությունները մերժել է և շրջափակման ենթարկել Հայաստանը, այլև վերջինիս նկատմամբ բացահայտ ռազմական սպառնալիքի է դիմել: Անկախության հռչակումից հետո հակահայաստանյան միակ քայլը, որ նա դեռևս չի ձեռնարկել, ռազմական ներխուժումն է:

Թուրքիայի հայկական քաղաքականությունը որևէ առաջընթաց չի արձանագրել, մինչդեռ դրա հետևանքով քաղաքական լարվածությունը մշտական գործոն է դարձել Անդրկովկասում և լուրջ վնաս հասցրել այլ երկրների հետ Հայաստանի համագործակցությանը: Թուրքիային հակակշռելու հրամայականը Հայաստանից պահանջում էր համարժեք հակաքայլերի ձեռնարկում: Սակայն, ՀՀ արտաքին քաղաքականության սահմանափակումը սոսկ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հիմնախնդրով, նրան զրկեց այդ հնարավորությունից:

Ավելին՝ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման նախաձեռնությունը ԵՄ-ին զիջելու մտավախությամբ, ԱՄՆ-ն՝ ի հակակշիռ եվրոպական երկրներում ծավալվող Ցեղասպանության ճանաչման գործընթացին, հակադրեց հայ-թուրքական հաշտեցման գործընթացը: Դա ոչ միայն կասեցրեց Եվրոպայում մեկնարկած ալիքը, այլև Հայոց ցեղասպանությունը վիճարկման նյութ դարձրեց՝ պայմանավորված հայերի հետ թուրքերի երկխոսությամբ:

ԵՄ-ին նախաձեռնության հնարավորությունից զրկելու Վաշինգտոնի ձգտումը կանխորոշեց երկխոսության ընթացքը: Թերևս այդ առումով հատկանշական էին ՀՀ իշխանությունների՝ «Թուրքիայի հետ, առանց որևէ նախապայմանի, տնտեսական, քաղաքական, դիվանագիտական համապարփակ երկխոսություն սկսելու Հայաստանի պատրաստականության» մասին պաշտոնական հայտարարությունները: Այսպիսով, թուրքական իշխանությունների որդեգրած քաղաքականության սնանկությունը երևան հանելով՝ նրանք, վերջիններիս հակահայաստանյան գործունեությունը խոչընդոտելիս, միաժամանակ սահմանափակում էին այդ քաղաքականությունը խրախուսող միջազգային ուժերի հակազդման հնարավորությունները: Սակայն ԱՄՆ-ի միջամտությունը գերազանցեց բոլոր ենթադրությունները:

Երկխոսության ԱՄՆ-ի պահանջներին պաշտոնական Երևանի ականա ընդառաջումը թուրքական իշխանությունները ծառայեցրին Հայաստանի հետ մերձեցման միտումներին, որոնց արտահայտման արդյունավետ միջոց դարձավ հայ-թուրքական սահմանի բացման

Թուրքիայի պատրաստականությունը:

Նկատենք, որ թուրքական նորընտիր իշխանությունների վարած քաղաքականությունը ոչնչով չի տարբերվում նախկինից. եթե նախորդները Հայաստանին նախապայմաններ էին առաջադրում դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար, ապա իսլամամետ «Արդարություն և բարգավաճում» կուսակցության կառավարությունը հարցը տեղափոխեց հայ-թուրքական սահմանի բացման հարթություն [17]: Դրանով երկկողմ հարաբերությունները ոչ միայն ելման կետ վերադարձան, այլ՝ նահանջ ապրեցին, ընդ որում՝ կոնֆլիկտային լրացուցիչ պաշարով: Այդ հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ անկախ դիվանագիտական և առևտրատնտեսական շփումների մակարդակից, ՀՀ-Թուրքիա հարաբերությունները զարգանալու են սկզբունքային և խոր անվստահության պայմաններում [18, էջ 30]: Հետևաբար, Թուրքիայի նկատմամբ Հայաստանի դիրքորոշումը պետք է նույնքան ակտիվ լինի, որքան Թուրքիայինն է Հայաստանի նկատմամբ [18, էջ 36]: Ուստի, Երևանը պարտադրված է հրաժարվել Անկարայի հանդեպ իր որդեգրած հանդուրժողական քաղաքականությունից: Առավել ևս, որ տարածաշրջանում ընթացող քաղաքական զարգացումներով պայմանավորված աշխարհաքաղաքական միանգամայն նոր իրավիճակն ընձեռում է նման հնարավորություն:

Խոսքը սեպտեմբերի 11-ից հետո միջազգային ահաբեկչությունն արձատախիլ անելու պատրվակով Աֆղանստանի և Իրաքի դեմ ԱՄՆ-ի վարած պատերազմների մասին է: Աֆղանական պատերազմի արդյունքում ԱՄՆ-ը, հենակետեր ձեռք բերելով Վրաստանում, Ուզբեկստանում, Տաջիկստանում, Ղրղըզստանում, ըստ էության իր ռազմական ներկայությունն ապահովեց Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում:

Նշված ենթատարածաշրջաններում ձեռք բերելով ինքնուրույն գործունեության հնարավորություն՝ ԱՄՆ-ը ձերբազատվեց Թուրքիայի միջոցով գործելու անհրաժեշտությունից, ինչը զգալի նվազեցրեց վերջինիս դերն ու նշանակությունը Վաշինգտոնի անդրկովկասյան և կենտրոնասիական քաղաքականության մեջ:

Իրաքում հակաահաբեկչական գործողությունների ավարտին ԱՄՆ-ը ձեռնամուխ եղավ Իրաքի վարչաքաղաքական վերակառուցմանը՝ հեռանկարային նպատակ ունենալով այդ երկրի օրինակով ողջ տարածաշրջանի վերակառուցումը: Քանի որ Իրաքի համար մշակված նախագիծը մեծապես պայմանավորված է քրդական ժրագրերով, որոնք Հյուսիսային Իրաքում քրդական ինքնիշխան պետության ստեղծման սպառնալիք են պարունակում, տեղի ունեցավ բախում Թուրքիայի և ԱՄՆ-ի ռազմավարական շահերի միջև:

Ինչ վերաբերում է Մերձավոր և Միջին Արևելքի վերակառուցման ծրագրին, ապա այն Իսրայելին ձերբազատում է հակառակորդներից, հուսալի հիմքերի վրա է դնում նրա ազգային անվտանգությունը և տարածաշրջանի երկրների հետ համագործակցության լայն հնարավորություններ է բացում նրա համար: Այսպիսով, Իսրայելի անվտանգությունն ապահովելու համար վերանում է Թուրքիայի միջոցով նրա հակառակորդներին հակակշռելու կարիքը: Ավելին՝ Մերձավոր և Միջին Արևելքի վերակառուցման պայմաններում կասկածի տակ է դնում տարածաշրջանում Թուրքիայի կիրառումը որպես առավել արևմտականացած աշխարհիկ մահմեդական պետության մոդելի:

Հարցը, սակայն, սոսկ Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ի ռազմական ներկայության հաստատումն ու Մերձավոր և Միջին Արևելքի վերակառուցումը չէ, այլ՝ քաղաքական այս երկու զարգացումների համադրումն է: Համադրման պարագայում մենք հանգում ենք աշխարհաքաղաքական նոր մակրոտարածաշրջանի ձևավորման եզրակացության, որն իր մեջ Մերձավոր և Միջին Արևելքի հետ ներառում է Կենտրոնական Ասիան և Անդրկովկասը: Իսկ դրա ձևավորման հիմքում դրվում է «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագիրը:

Կասկածից վեր է, որ թյուրքալեզու հանրապետությունների քաղաքական, տնտեսական և մշակութային միություն կամ համագործակցություն ստեղծելու Թուրքիայի հավակնությունները հակասում են ինչպես վերը նշված ծրագրի իրագործմանն ու սրանից բխող՝ Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ի ռազմական ներկայությանը, այնպես էլ Մերձավոր և Միջին Արևելքի վերակառուցման տրամաբանություններին: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ Մերձավոր և Միջին Արևելքի վերակառուցման դեպքում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն այլևս չի պայմանավորվի Անդրկովկասում ռուսական գործոնի չեզոքացման ԱՄՆ-ի շահագրգռվածությամբ, այլ՝ կդառնա տարածաշրջանի վերակառուցման անհրաժեշտություն: «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագրի իրագործման պարագայում էլ Հայաստանը գործոն կդառնա նաև ԱՄՆ-ի համար, այն տարբերությամբ, որ եթե հայկական գործոնն Անդրկովկասում Ռուսաստանի ազդեցության պահպանման դեպքում չեզոքացնում է թուրքական գործոնը, ապա ամերիկյանի պարագայում կսահմանափակի դրա հնարավորությունները:

Ասվածը հայկական գործոնի ինքնուրույնության վկայությունն է, հետևաբար, քաղաքական ճիշտ հաշվարկների դեպքում, Հայաստանը միանգամայն ի վիճակի է հակազդել Թուրքիային և հակակշռել իր բնույթով հակահայկական նրա քաղաքականությունը:

Անդրկովկասում և Կենտրոնական Ասիայում Թուրքիայի դերի

հետագա նվազումը, Մերձավոր և Միջին Արևելքում թուրք-ամերիկյան ռազմավարական շահերի բախումը, թյուրքալեզու հանրապետությունների միություն կամ համագործակցություն ստեղծելու թուրքիայի հավակնությունները և դրանց հակասումը «Մեծ Մերձավոր Արևելքի» ձևավորման տրամաբանությանը, միանգամայն հնարավոր են դարձրել Հայաստանի նկատմամբ Վաշինգտոնի դիրքորոշման բարելավումը: Թերևս դրա հիմքում հայ-թուրքական հարաբերությունների համար ստեղծված նոր ենթատեքստն է, որը պայմանավորված է տարածաշրջանային վերոհիշյալ քաղաքական զարգացումներով: Դրանք առանձին խնդիր են և մասնավոր մոտեցում են պահանջում:

Աղբյուրներ և գրականություն

1. «Московские новости», 1992, N 39, տես նաև «Ազգ», 26 սեպտեմբերի, 1992:
2. Ջարեվանդ, «Միացյալ և անկախ Թուրանիա», Եր., 1993թ., էջ 119:
3. Ն. Հովհաննիսյան, «Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հտ. 16, Եր., 1996թ., էջ 14:
4. Հ. Չաքրյան, «Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում», Եր., 1998թ.:
5. «Hurriyet», 23 Eylül, 1992:
6. Հ. Չաքրյան, «Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման ընդհանուր տրամաբանությունը», ՌԱՀԴԿ, Եր., 1997թ., էջ 8:
7. «Hurriyet», 5 Mart, 1992:
8. «Hurriyet», 23 Kasim, 1993:
9. Ibid, 2 Eylül, 1993:
10. «Gercek», Haftalik Haber Dergisi, N 1, 14 Haziran, 1992, s. 12:
11. Ibid, s. 10:
12. «Hurriyet», 23 Aralik, 1993:
13. «Cumhuriyet», 27 Subat 1995, «Hurriyet», 7 Temmuz 1995:
14. Ն. Հովհաննիսյան, «Հայաստանն անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոն», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հտ. 16, Եր., 1999թ., էջ 28-29:
15. H. Chakrian, The Armenian-Turkish Dialogue, «Iran and the Caucasus», vol. 5, Leiden, 2001, p. 226:
16. Հ. Չաքրյան, «Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը՝ Անդրկովկասում ապակայունության գործոն», «Իրան-նամէ», հտ. 35, 2000թ., էջ 16:
17. «Ազգ», 2 օգոստոսի, 2003թ.:
18. Ա. Այվազյան, «Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը», Եր., 1998թ.:

Սեպտեմբերի 11, 2003 թ.

АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В КОНТЕКСТЕ ПОЛИТИЧЕСКИХ РАЗВИТИЙ НА БЛИЖНЕМ И СРЕДНЕМ ВОСТОКЕ

Акоп Чакрян

Резюме

Ближний и Средний Восток, будучи сложной геополитической средой для Армении, содержит в себе как внутренние противоречия региональных государств, так и противостояние интересов крупных держав. Это обстоятельство поставило Армению перед дополнительными трудностями, что негативно отразилось на ее международной позиции, тем самым усложнило решение задач по обеспечению национальной безопасности собственными силами.

Превращение Турции в региональную державу, тем более перспектива создания межтюркского государственно-политического объединения под ее протекторатом вряд ли соответствует глобальным и региональным интересам США, ибо образования самостоятельных блоков противоречит не только логике американской стратегии, но и будет препятствовать американским планам реализации преобразования всего региона.